

COVID-19

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Մաքրում և Ախտահանում

Վերջին Թարմացումները (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

4/21/2021 – Թարմացվել է՝ համաձայնեցնելու Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնների (CDC) կողմից հրապարակված ուղեցույցին:

Սույն ուղեցույցը տրամադրում է առաջարկություններ այն սենյակների կամ տարածքների մաքրման և ախտահանման վերաբերյալ, որոնք զբաղեցված են COVID-19-ով վարակված կամ COVID-19-ով կասկածվող անձանց կողմից: Այն նպատակ ունի սահմանափակելու վիրուսի գոյատևումը հիմնական միջավայրերում: Այս հրահանգները կենտրոնանում են ոչ առողջապահական հաստատությունների վրա, ինչպիսիք են՝ դպրոցները, ինստիտուտները, գրասենյակները, ցերեկային խնամքի կենտրոնները, բիզնես-ձեռնարկությունները և համայնքային կենտրոնները, որտեղ անձինք չեն բնակվում գիշերակացով: Այս հրահանգները նախատեսված չեն մաքրելու առողջապահական հաստատությունները, բնակարանները կամ այլ վայրեր , որոնց համար արդեն կան հատուկ ուղեցույցներ: <http://ph.lacounty.gov/media/Coronavirus/>

Լրացուցիչ Նկատառումներ

- Հիմնական տարբերակը, որով մարդիկ վարակվում են SARS-CoV-2-ով (վիրուս, որը առաջացնում է COVID-19-ը), վարակիչ վիրուսը կրող շնչառական կաթիլների ազդեցությանը ենթարկվելն է: Հնարավոր է, որ մարդիկ վարակվեն աղտոտված մակերեսների կամ առարկաների (ֆոնիտների) հետ շփման միջոցով, սակայն վտանգը, ընդհանուր առմամբ, համարվում է ցածր:
- Գործատուները պետք է մշակեն աշխատողների պաշտպանության քաղաքականություն և նախքան մաքրման առաջադրանքներ ներկայացնելը՝ տեղում վերապատրաստեն մաքրությանը զբաղվող ամբողջ անձնակազմին: Վերապատրաստումը պետք է ներառի՝ երբ օգտագործել **անձնական պաշտպանիչ սարքավորումները** (PPE), ինչի համար է անհրաժեշտ PPE-ն, ինչպես ճիշտ կրել (հագնել), օգտագործել և հեռացնել (հանել) PPE-ն, և ինչպես պատշաճ կերպով ազատվել PPE-ից: ¹
- Գործատուները պետք է ապահովեն աշխատողների վերապատրաստումը աշխատավայրում օգտագործվող մաքրող քիմիական նյութերի վտանգների համար՝ համաձայն OSHA-ի Վտանգների Մասին Տեղեկացնելու չափանիշների (29 CFR 1910.1200):¹
- Գործատուները պետք է համապատասխանեն Արյունածին Հարուցիչների վերաբերյալ OSHA-ի չափանիշներին (29 CFR 1910.1030), ներառյալ՝ կարգավորվող թափոնների պատշաճ հեռացումը և անձնական պաշտպանիչ սարքավորումները (PPE) (29 CFR 1910.132): ¹
- Մշտապես հետևեք մաքրման և ախտահանման քիմիական նյութերի պիտակների ցուցումներին

	Սովորական Մաքրում	Մաքրում, երբ Որևէ Անձ Հիվանդ է
Նկարագրություն	Իրականացվում են կանոնավոր մաքրման աշխատանքներ:	Սովորական մաքրում ԳՈՒՄԱՐԱՑ տարածքի ախտահանում , որը զբաղեցված է եղել հաստատված COVID-19-ով վարակված անձի կողմից և որը գտնվել է հաստատությունում 24 ժամվա ընթացքում: Եթե անցել է ավելի քան 24 ժամ այն պահից, երբ հիվանդ կամ COVID-19-ով ախտորոշված անձը գտնվել է այդ տարածքում, մաքրումը բավարար է: Կարող եք նաև ախտահանել կախված որոշակի պայմաններից կամ ձեր հաստատության կողմից պահանջվող առօրյա գործելակերպից:

COVID-19

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Մաքրում և Ախտահանում

	Սովորական Մաքրում	Մաքրում, երբ Որևէ Անձ Հիվանդ է
Անձնական Պաշտպանիչ Սարքավորումներ (PPE)	Եթե օգտագործվում են քիմիական նյութեր, հագեք ձեռնոցներ ձեռքերը պաշտպանելու համար:	Մաքրման և ախտահանման ժամանակ կրեք դիմակ և ձեռնոցներ: ¹ Անպայման հետևեք Անվտանգության Տվյալների Ծանուցումներին կամ քիմիական նյութերի պիտակների հրահանգներին:
Ախտահանող Միջոց	Օգտագործեք ամենօրյա մաքրման պարագաներ և ախտահանող միջոցներ սովորական մակերեսների համար, ինչպիսիք են՝ հատակը, սեղանները, գրասեղանները, վազարանները, զուգարանները և այլ կոշտ մակերեսներով կահույքն ու սարքավորումները:	Օգտագործեք Նոր առաջացող հարուցիչների համար EPA-ի կողմից հաստատված ախտահանող միջոց: ²
Մաքրման Գործողություններ	Կատարեք հետևյալ գործողությունները՝ a) Սրբեք կոշտ մակերեսների փոշին b) Խոնավ կտորով մաքրեք կոշտ մակերեսները՝ ազատվելով թափոններից c) Խոնավ կտորով մաքրեք հատակը d) Փոշեկուլով մաքրեք գորգերը և ուղեգորգերը	a) Բացեք դրսի դռները և պատուհանները հիվանդ բնակչի տարածքում՝ հնարավորության դեպքում օդի շրջանառությունն ավելացնելու համար: ¹ b) Կենտրոնացեք այն անմիջական տարածքների վրա, որոնք զբաղեցված են եղել COVID-19-ով ախտորոշված անձանց կողմից: c) Մաքրեք և ախտահանեք՝ • ԲՈՒՈՐ ոչ ծակոտկեն մակերեսները, հատկապես՝ բարձր հպման մակերեսները (օրինակ՝ գրասեղան, սեղան, ամուր մեջքով աթոռ, դռան բռնակ, լույսի անջատիչ, բռնակ, համակարգիչ, ստեղնաշար, մկնիկ, հեռախոսներ) հիվանդ բնակչի տարածքում/աշխատասենյակում, ինչպես նաև ընդհանուր սարքավորումները (ինչպիսիք են՝ պլանշետները, սենսորային էկրանները, ստեղնաշարերը, հեռակառավարման վահանակները և ATM սարքերը, լոգասենյակներում ընդհանուր տարածքները, որոնք օգտագործվել են հիվանդ անձի կողմից՝ կենտրոնանալով բարձր հպման մակերեսների վրա • Հիվանդի տարածքում/աշխատասենյակում ծակոտկեն մակերեսների համար (օրինակ՝ գորգ, աթոռ) հեռացրեք տեսանելի աղտոտումը, մաքրեք համապատասխան մաքրող միջոցներով և ախտահանեք կոնկրետ նյութի օգտագործման համար նախատեսված հեղուկով / ցողիչով: d) Մանրակրկիտ մաքրումն ու ախտահանումն ավարտելուց հետո տարածքը կարող է Նորից զբաղեցվել:

1. Ձեր Հաստատության Մաքրում և Ախտահանում <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/community/disinfecting-building-facility.html>
2. N Գործիքի Ցանկ՝ COVID-19-ի Ախտահանող Միջոցներ՝ <https://cfpub.epa.gov/giwiz/disinfectants/index.cfm>

